Տեսար իմ հայրենաց տունը,
 Գեղեցիկ զարգարուած գոյնը,
 Նորայ սիրուն տանջւումն,
 Աչքերիցս կարաւ քունը:

Ազատ տեսար մեր լեռները,
 Հազարդեցիր գո՛ւ իմ սէրը,
 Այն լեռներու պաշպանողը,
 Արիւծի կորին նեաերը:

Տեսար մեր փոքրիկ բերաստան,
 Վարդ միխակ շուշաններ շատ կան,
 Եղեմական գրախտավայր—
 Նա կոչւումէ Հայաստան:

Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
 Միջնո՞ղ ընչ կապտեսս ի՞նչուր,
 Արի առնեմ իմ թևերուն,
 Գնանք այնտեղ ուրախացուր:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես ընկած եմ քիւրդերի մէջ
 Արնաշագախ վէրգերով լցուած,
 Ինձ կարծել են մեռած,
 Թողել գնացել են.
 Կիսամեռ թշուառս ինչ անեմ—
 Ս'նացել եմ անօգնական:

Երբ նայում եմ լուսնի լուսով—
 Հազարներով փռուած գետին—
 Սատկած և վիրաւոր
 Զարիֆրէկի քիւրդեր մրմնջում են միլա,
 Վախկօտ հեկտլօներ,
 Տեսարանը ուրախալի էր,
 Թեթեանում են իմ վշտեր:

Քիւրդ լացկոծների միջից:
 Հանկարծ լուսեց մայր իմ անուշ,
 Ախ այդ ձայն էր հայկական,

Կնացիդէպ նորան տեսայ ընկերս էր,
Զինուոր էր նա վերջ ըստացած,
Արեան դաշտում ինձ նման:

Չեոք մեզնեցի մտերիմիս ասի,
Նայիր բուրդ հոգի ստացիր,
Հայի յաղտութիւնը մեծ է ջան Փիղան,
Փառք իւր Գրօշակին,
Վիրաւորներս սիրտ առած,
Հեռացանք այդ արեան դաշտից:

Վերու սաղ եմ քաջի պէս,
Տես իմ վերքերուս տեղերը,
Հաւատացէք հայ զինուորի ուղղութիւնը,
Որ չ'խնայեց իւր ազգին իր արիւնը,
Ազատութեան գորհեր ենք մենք:
Ազատ կամքով, ազատ խղճով:



Եւր ես մէծացայ, աղամարդ դարձայ,
Ու սիրտս զնգաց սիրոյ վառ վառման,
Ուզեցայ սիրել ազգիկ սև աշեայ,
Բայց դու գիրկս ընկար, անգին հրացան:

Ու բոց կարօտով գրկեցի ես քեզ,
Սխմեցի կրծքիս, անգին հրացան,
Իմ սրտի տէր, հարսնացու դարձար,
Անգին ընկերս, իմ սէր հրացան:

Երբ թշնամու գէտ կուռի եմ վազում,
Դու կրծքիս սխմած, անբաժան հետս ես,
Դուն ես միշտ սրտիս մըրբիկը հայանում,
Քեզնով են վնչում, որոտում վրէժ:

Եւ երբ գազազած զլուխս դնեմ,
Կուռի դաշտում կուզեմ որ փորեն,
Քեզնով մի փոս, կուռի ընկերներ,
Քեզ հետս թագեն իմ հարս իմ ընկեր:



ՄՂԵՅՈՒ ՄՕՐ ԱՂԱՉԱՆՔԸ:

Թիփի բորան մութ գիշերին,
Կպարտուէ Փիղային,
Գատրօնդաշն խաչվազ թալած,
Չեոքին հրացան ու սուին:

Ախ, ձեզ մտտող ջան Փիղայք,
Չեք մէք ձեզի թող մեռնի,
Մշու Սուլթան սուրբ Կարապէտ,
Չեզի քեռմակ թող եղնի:

Դուք խիցուցիք քիւրդ տնօրեն,
Քշեք մեր սար ու ձորեն,
Քեաֆու քրդու աջ վախեցու,
Ջան Փիղայու գրուլայից:

Ախ, Ֆիդայիք ձեր սաղաղեն,
 Չեր խեղ տարէք իմ տղուն,
 Չեր խեղ մըռնի, ձեր խեղ ապրի,
 Ազգի մատաղ զիմ տղեն:

Թող զէն թողնի խարօր ու մահ,
 Իմ մէկ ու ճար շփիկ լաճ,
 Քիչմալ թուանքի խեղ թող խազա,
 Էլ թող չ'տայ քրդին խարճ:



Մենք պետքէ կուունք և ոչ լաց լինենք,
 Ազգի կորուստը զենքով հետ խլինք.
 Այսքան դար լացինք ո՞վէ լսողը,
 Մեզ ինչ շահ բերեց արցունքի ծովը:

Այլևս չ'լանք և ոչ լաց լինենք,
 Կրակուած սրտով մէք գործը վարենք:
 Անվէհեր քաջին այս է պատկանում,
 Միշտ ազատ մեռնել կուռի լայն դաշտում:

Մօլի և երկչոտ տանիկը թող լայ,
 Երբ Հայ քաջի դեմ կռիւ դուրս կուգայ,
 Մենք վախեցող չենք մահից տանջանքից,
 Եւ ոչել գաժան մահու գնտակից:

Անէծք այն հօրը չի մղում որդուն,
 Որ ազգի սիրուն նա թափէ արիւն,
 Ամօթ այն հային և բիւր նախատինք,
 Որ ազգի սիրուն չի գործում բարիք:



Ես հանեցի սուրբ պատեանից,
 Արտասունքովս օծեցի
 Տրամաւ անուշ սիրեկանս,
 Երբ իմ ողբս կտրղացի:

Նա երթուեցաւ իմ սրովս,
 Չը խնակ թուրքերուն,
 Այս պայմանով աշխույժ քաջին,
 Սուր հրացան հանձնեցին:

Աստուած ոիրէք Հայ աղջիկներ,
 Եկեք խորենք միտսին,
 Այսուհետև ալ չ'սիրենք,
 Կուռից փախչող վախկոտին:

Խիստ պզուելի կերպով նայենք,
 Ոսկով սիրող մեռնողին,
 Յամբայրի տեղ թոյն կամենանք:
 Թուրքից վրէժ չառնողին:

Սպեռված կրկնեց քաջը,
Ում կապաննք վայ մեզի,
Նա հեռացաւ մոնչալով,
Ինչպէս կորին առիւծի:

Կը գայ գարուն մենք կ'սկսենք,
Նոր կեանք նոր բաղա քիւրդի հետ,
Թեր լեռներից պիտի յոտայ,
Արին ինչպէս հղուն գետ:

Քեզի մեռնեմ Տիրան—Տիրան,
Քաջ Աէյթունի սիրեկան,
Հազար երանի ամեն հայ կնոջ,
Մարդ կունենայ քեզ նման:

Բարկինիկիս օրօրենք ուրբով,
Վառօթ մաղենք ձեռքերով,
Ըուն սուլթանի հետ գործ ունենք,
Դեռ Աէյթունը չի ապահով:

Տիրանի պէս քաջեր սիրենք,
Արժանի էր մեր սիրուն,
Որը գիտէ սրով պահել,
Կին չի հանձնել թուրքերուն:



Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր Ի Ն:

Հին հերոսներն ինչպէս մտնող արևներ
Աանհայտացան հորիզոնից ուղմական,
Կուռի դաշտում մի պահ տիրեց սև զիշեր
Ազատութիւն ու իրաւունք սուղ հաքան:

Չը վհատենք վառ արշալոյս Հայկական
Բիւր, էրփներանգ արևներով կ' ծագի,
Նորա համար այնքան արև մայր մտաւ
Որ զարդարեն մեր մէծ այգը նոր կեանքի:

Եւ հարգարին ծիրանիվ շողշողուն
Լոյս առապաստն երբեք չուլթեան ճշմարիտ,
Ազատութիւն, իրաւունքի և սիրոյ
Որոնք աւին մեզ ազատ կեանք ու տաք սիրտ:



ՅԻՉԱՏԱԿ 1897 թ: 25 յուլիսի Արշաւանքին:

Պաշարեցին խանայ ձորեր,
Դաշնակցութեան քաջ Հայուկներ,
Ըուն շերիֆի բիւր վրաններ,
Կեցցէք կեցցէք հայ հերոսներ,
Որ ջարդեցին շուն քիւրդեր:

Յարձակուեցան քրդաց վրան,
Սարսափեցուցին շարաֆ ազուն.
Կին ու աղջիկ, փոքր աղաք,
Կեցցէն կեցցէն և այլն:

Առաուլայ բարձր սարեր,
Իրանց գագաթ թուխպ են կապել,
Առաւոտեան արև առէր,
Չարիֆ քէզի սիրտն խաւար էր,
Կեցցէն կեցցէն և այլն:

Առաւոտեան արշալուսին,
Հայ քաջերը ձեռք վերուցին,
Դաշտ ու ձորեր գիակք լցին,
Նահատակած վրէժ լուծին,
Կեցցէն կեցցէն և այլն:

Հայկա: բանակը արշաւեցին,
Չեւնին առած սուր և մօսին,
Քիւրդաց ջարդին արշալոյսին,
Կեցցէ կեցցէ և այլն:

Չատրներաց բարակ սիւներ,
Սյրում էին հայ հերոսներ,
Սև կապեցին քիւրդար կիներ,
Կեցրէն կեցցէն և այլն:

Ծածանում էր Գրօշակներ,
Որոտում են մոսիներ,
Գլորում են անթիւ քիւրդեր,
Կեցցէն կեցցէն և այլն:

Սպարապետ քաջն Վարդան,
Հրաման տուր քշենք դէպ Վան,
Կողացնենք այն շուն սուլթան,
Որ ճանչնայ հայուն իւր ծեռը,
Բռնած սուր և հրացան ու ինքն ազատ է
ազատ:



Նպատակիս համեմ միայն,
Թող զիս հանեն կախազան,
Կախազանն խեղդուկ ձայնով,
Պիտի գոչեմ ա՛խ Հայաստան:

Ախ Հայաստան սիրտս ու հոգիս,
Քեզ նուիրեմ ընդունէ.
Թէ կաբելի, թող ևս մեռնեմ,
Թաք Հայաստան ստքի կինէ:

Անոր սիրուն, բանտնայ մտնեմ,
Պայատէ այն ինձ համար,
Ոտք ու ձեռքս շղթայակապ,
Երջանկութիւն է ինձ համար:

Թէ մինչև իսկ արտորուեմ ալ,
Թափառական գտնէ զիս բախտ.
Հայաստանի սիրոյն համար,
Փշոտ վայրեր Կլան գրախտ:

Այս Հայաստան դու սիրուն մայր,
 Մինչ երբ այսպէս քո որդիք.
 Քեզնեն հեռու պիտ հառաչեն,
 Իսկ դուք մինչև երբ թափառեր:

Երբ պիտի գայ հայ թագաւոր,
 Սուրբ ձեռքին, գորք հեռեին.
 Գրօշակները ծածան—ծածան,
 Արքայական թագը գլխին:

Այս Հայաստան աչքդ գարցար,
 Քեզ փնտռող որբերուն.
 Գէս—պէս ցաւոր կ'տանջուեն,
 Գարման եղիւր հայ քաջերուն:



Հերիք է մայրիկ դու ինձ փայփայես,
 Հերիք է մայրիկ ինձ կրծքիդ սխմես,
 Ես կուզեմ խմել ջրի տեղ արիւն,
 Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:

Հասակս քսան տարուց անց կացաւ,
 Սիրտս վրեժով լիքը լցուեցաւ,
 Չեմ ուզում տեսնել եղբայրս թշուառ,
 Ես կուզեմ կռուել ես կուզեմ մեռնել:

Լացով շենք կ'բող փրկել Հայաստան,
 Մայրիկ ինձ պետք է ձի, սուր հրացան.

Չեռներս ծալած չեմ կարող նստել,
 Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:

Համիդեան ունի գործեր մեզի հետ,
 Մեզ կոտորում են մեզ թալանում են.
 Հերիք է մայր իմ կարող ես լուել,
 Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:



ԵՐԿ ՄԻՌԻԹԵԱՆ ՎԵՍ:


Եթէ կամենք փրկել թշվառ Հայրենիք,
 Նախ պիտ կապենք մեզ մէջ մի սիր ու հոգի,
 Եթէ կամենք անցեալ փառքին տիրադալ,
 Հարկաւոր չէ կոսակցութեան բաժանուել:

Արիք եղբայրք միանանք,
 Բաւ համարենք մեր տանջանք,
 Իսէր ճնշուած հայ ազգին,
 Գործ գնենք մեր շիք ու ջան:

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին,
 Որ մեր տունը իրանց ձեռքով քանդեցին,
 Ուրիշների սուտ պարզեցին շրացած,
 Որ մեզ մատնեն մինչև սոմ գերութեան:
 Արէք եղբայրք միանանք և այլև:

Մենք հնչակ ենք եղբայրք դուք Գաշնակցական,
 Միայն երկուսըս էլ կուլանք վիշտը հայկական,
 Արեք վճռենք հոգով սրտով միանանք,
 Ձեռք ձեռքի տանք ապա գործենք արշաւանք:
 Արեք եղբայր միանանն և այլն:

Մի նպատակ և մի վսեմ գաղափար,
 Մեզ կրօնականն անհամբեր ու անդադար,
 Ուղիներ եղբայրք յայտնենք սրտի միութիւն,
 Միութիւնով պիտի գտնենք փրկութիւն:
 Արեք եղբայրք միանանք և այլն:



Ն Ո Ւ Ի Ր:

Անուշաբոյր թարմ ծաղիկներ,
 Հայ օրիորդն ինձ բնծայեց,
 Հեռու երկրից անկեղծ նուէր,
 Իր քոյրերուն ուղարկեց:

Ասաց տուր այդ փունջն ու ասայ,
 Թէ չի անցնիլ էլ երկար,
 Կառի գաշտում հարս ու փեսայ,
 Կը հանդիպենք մենք իրար:

Կախ կուտանք, կախ արդար,
 Կախ վերջին ճկնական,

Գոտէ պնդուած հերոսարար,
 Ու կազատենք Հայաստան:

Գուրս ցայտեցին արցունքներ տաք,
 Իմ աչքերից այդ պահուն,
 Լսում էի կարծես անհագ,
 Ազգութեան պաղգամին:

Եւ երդուեցի տանել փունջն այն,
 Դէպի կարմիր Հայաստան,
 Սուր վիրաւոր, հայերն համայն,
 Սպասում են փրկութեան:



Կենաց փշոտ ասպարէզը,
 Աւաղ, աւաղ ինձ դիպաւ,
 Ջուրս լեզի կերած հացս,
 Ո՛հ կորած հացս թոյն դարձաւ:

Հեռու երկինք արև լուսին,
 Աւաղ, աւաղ տխրամած,
 Ես կը հեծիմ բանդիս խորը,
 Ո՛հ բանդիս խորէն շղթայուած:

Չ'կայ հայր իմ չ'կայ մայր իմ,
 Աւաղ, աւաղ քոյր եղբայր,
 Եւ ոչ միայն մխիթարիչ,
 Ո՛հ մխիթարիչ բարեկամ:

Անմեղական լուր գրկելով,
Աւաղ, աւաղ սուլթանին,
Մօլլէկրօն ու վայրաշեղ,
Ո՛հ վայրաշեղու խաւամին:

Վերաքննեց չար նկատեց,
Աւաղ, աւաղ իմ մասին,
Վնասակար դիս նկատեց,
Ո՛հ դիս նկատեց իւր ազգին:

Ահա կիջնեմ սև դերեզման,
Աւաղ, աւաղ գրկեմ հոգ,
Իմ անունս, յիշատակս,
Ո՛հ յիշատակս մնայ թող:

Մի հարցաներ իմ շօրերս,
Աւաղ, աւաղ դուն Սարգիս,
Ես կ'մեռնեմ մինչ յաւիտեան,
Ո՛հ մինչ յաւիտեան դուն Դաւիթ:



(ԴԱՒԱՃԱՆ ՄԱՐԴՈՒՆ)

Նա գաւաճան է և անտարրեր է,
Մայր Հայաստանի կոծը տեսնելիս,
Մատնիչէ և գաւաճան,
Մայր Հայաստանի լացը տեսնելիս:

Մահ ուրացողին, մահ գաւաճանին,
Նզովք և անէժք նոցա է բաժին,
Մեռնելիս յաւէտ ճնշուին,
Այլպէսիններն հայերի ցանկից:

Հայի նախանձը, հայի զայրութք,
Պիտի գռգռուի նոցայ տեսնելիս,
Արիւն նոցայ, պիղծ արիւն,
Զքանալու է հայերիս միջից:

Հերիք է հերիք, հայ հսկաներին,
Սուրբ շիրիմներին նախատինք թափեն,
Անէժք և բիւր նախատինք,
Նոցա անունին և յիշատակին:



ՍԵՐՈՎԻՒ ԱՆՄԱՀ ՅԻՉՏԱՍԿԻՆ:
(1899 թ.)

Բոլոր աշխարհում լսուեց քո հանբաւ,
Առիւծ քաջարի, ազրեր ջան,
Հայոց աշխարհի:

Հայութեան անուն խիստ բարձրացուցիր,
Քնացած սրտեր, ազրեր ջան
Դուն բորբոքեցիր:

Մեզի օրինակ թողեցիր գացիր,
Երիզատարդաց, աղբեր ջան
Գուներ բաց արիր:

Քաղցր հայրենիքդ բնառ չթողիր,
Մինչև վերջին շունչ, աղբեր ջան
Պատերազմեցիր:

Սուրբ գործ սիրեցիր, խմբեր կազմեցիր,
Անգութ թուրք և քիւրդ, աղբեր ջան
Սարսափեցուցիր:

Բազեշ վիլանթը ոտքի կանգնեցուցիր,
Խեղճ ժողովուրդին, աղբեր ջան
Հոգի յոյս տուիր:

Գիշեր և ցորեկ ախլաթ լալիս է
Անդազար կ'զոչէ աղբեր ջան
(Սերուր և Սոսէ):

Այժմ ննջում ես սև հողի տակին,
Մեզի թողնելով, աղբեր ջան
Օգնել հայ ազգին:

Սերուր աղբոր, գործին հետեւենք,
Վրէժ կ'զոչէ, աղբեր ջան
Հայեր վրէժ առնենք:



ՀԱՅԳՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ:

Ո՛վ իմ հայրենիք, սիրուն գեղեցիկ,
Սերա փուշերու մէջ դու վարդ մենակիկ,
Քո ախուր սրտին լսուի հառաչանք,
Վիշան է պատեր քո սգաւոր կեանք,
Անգութն իսկ չուզէ քո ողբ հեծեծանք,
Եւ մենք քաջ հայեր, անզգայ մասնք:

Առ ձեզ կաղերսէ թշուառ Հայրենիք,
Սիրոյ գորութեամբ օգնութեան հասէք,
Անոր ողբերըն ելած արձագանք,
Ըզձեզ չի թընդեր արթնեցէք Հայրունք,
Ով ազատասէրք, պարծանք հայութեան,
Արդ եզէք սիրով հայրենեաց պաշտպան:

Եթէ ունիք սիրա վարդանոյ պէս քաջ,
Ինչո՞ւ էք կեցեր, ո՛հ քաջ հայք, առաջ,
Անգութ վատ թուրքի բարբարոսութիւն,
Ի վրէժ կ'մղէ մեր սիրտն ու արիւն.
Կողբայ Հայաստան, կ'ողբայ անդազար,
Արձագանք նորա շարժեն լեռ ու սար,
Եւ ձեր սրտերը ժայռ էն ալ կարծրեն,
Որ ողբն հայրենի, ալ-ուշինչ դնեն:

Ամոթ չէ միթէ, դեռ լինենք գերի,
Ալ բաւէ զարթիք դուք հայեր արի,
Չեր վառ զգացմունք թողալ խրախուսին,
Ս.Ն.Ի. ասորն ու գենք բնդեմ վատ թուրքին,

Եւ դու Տէր-Պատուած տուր մեզ սիրտ արի,
Որով մեր անուն քաջութեամբ փայլի:

Ոչինչ են թուրքի թնդանօթն ու զենք,
Երբ մենք հայերս միացած լինենք,
Հառաջ քնթանանք անվախ անվհեր,
Մեզ զենք ունենալով հայրենեաց վատ սէր,
Եւ մեր յոյսն այս Ռայն լինի.
Ազատութիւն կամ մահ վասն Հայաստանի.
Ուրեմն պարզենք մեր Գրօշակն հայկական.
Տալով նոր հոգի նոր կեանք հայութեան:



«ՀԱՅԳՈՒԿԵՆԵՐԸ Վանայ ծովի վերայ»:

Ուշ գիշերին ծովն է խաղաղ,
Ջրեր վճիտ ու յտակ,
Ջինջ է երգինք միապաղաղ,
Աստղազարդ, կապուտակ:

Պարզ հորիզոն մէկ էլ յանկարծ,
Սև ամպերով մռայլեց,
Քամի բրտաւ, քամի անսանձ,
Եւ ծովակն այլայլուեց:

Կուրծքն առիւծ ու փրփրուն,
Ալիքներըն ահապին,
Սուզ ու հառաչ, գոռ ու գոշուն,
Թռան ծոցից ծովակին:

Սիրուն ծովակ ասան դու մեզ,
Էլ ինչ նորից ուզուեցիր,
Այն ինչ բոթ էր որ բերեց քեզ.
Քամին մոլար անձարձիր:

Արդե՞ք սղր էր ու յառաշանք,
Երգեց նա քո ականջին,
Կոյսի մըմունջ, մօր հեծեծանք,
Թէ ճիշտ անմեղ մանկիկին:

Արինապատ մեր ձորերում,
Հիւսել էր իր մեղեաին,
Թէ աւերակ մեր գիւղերում,
Կազմել երգը ցաւապին:

Ախ այդ ցաւոտան երգերով,
Մեզ քուն ասին մեր մայրեր.
Ու սարսափի զրոյցներով,
Խլացրին մեր ճիշեր:

Ու այնուհետ շատ տարիներ,
Նոյն երգերը տխրապին:
Սև դարձրին կարմիր օրեր,
Վախով լցրին մեր հոգին:

Մի անգամ էլ մեր լեռներում,
Մի հողմ փշեց ահաւոր,
Էլ աբտասուք նա չէր երգում,
Ոչ սղր ասում էր որ:

Սև լեռներից մուսյլ ծոցից,
Խլած հսկայ գոշիւններ,
Սև ժայռերի գոշիւններից,
Նա կազմել էր իր երգեր:

Պատր ու կարմիր գետը հուզուած,
Այնտեղ ուներ իւր բաժին.
Մայր բնութիւնն էլ զարհուրած.
Միացել էր այդ երգին:

Երբ ժայռերը գտում էին,
Հայն ինչպէս լուռ կենար,
Երբ լեռները գողում էին,
Մեր սիրտն ինչպէս դիմանար:

Եւ խլեցինք մենք պատեանից:
Սրեր վաղուց մոռացուած,
Եւ գուրս ընդանք մեր տներից,
Դեպ սուրբ վախճան աւերուած:

Լուռ կայ քամի մի փշիւր, լճու,
Զատ յուզեցիր ծովակին,
Թող շշնջայ մեղմիկ գեփիւր,
Թող հանգիստ թող ծովակին:

Լճու կայ, ծով դարերի լալկան,
Էլ բաւ է այսքան հառաչներ,
Մենք գոր ունինք սուր հրացան,
Զուտ վերջ կ'առնեն քո ցաւեր:

Թող միայն մեզ շուտով լողնանք,
Թող որ հասնենք այն ափին,
Տես, լսում են ճիշ ու հառաչանք,
Աղերս ու սղբ անմեղին.....:

Դէ՛հ ընկերներ, զարկենք թիւր,
Հգոր բազկով միասին,
Մօտ է ափը, հէ՛ աղբերներ
Ահա՛ հասանք, ձեր հաւարին:



ՍԵՐՈՒՔ ՓԱՋԻ յիշատակին:

Գլուխդ Բաղէշ և մարմինդ ի Մուշ,
Հովի պէս անցար դու քաջի նմուշ,
Անունիդ մատաղ, թուրքի աչքի փուշ,
Աղբեր ՍԵՐՈՒՔ ջան անունդ քաղցր—անուշ:

Անմահ գիւցադն խլաթայ
Հսկա կորիւն նիւրութայ,
Հայերուս փառք և բաղձանք
Քեզ մատաղ Սերոր Փաշայ:

Ասկից վերջ Բաղէշ քեզ պիտի յիշէ,
Եւ հօրդ արցունքներ միշտ պիտի թափէ,
Գլուխդ գերեզման երբ նա կ'տեսնէ,
Աղբեր Սերոր ջան միշտ պիտի կանչէ:

Հողի տակ ննջէ դուն զաւակ Հայկայ,
Անունդ ազգիս մէջ միշտ պիտի մնայ,
Հայք քեզի գոչեց զիւցապն Խլախայ:
Թորքը սարսափած կասէ քեզ Ս.-Փաշայ:

Սաէ Սիփան սև սար Գագոր և Նիմրուխ,
Որք են մնացել քաշեն քո կարտա,
Երգիր գող հանիչ անցար քո խմբով,
Աղբեր Սերոր ջան, մաշուանք քո սիրով:

Մենք քո ընկերներ կուխտեմք երգումով,
Որ վեր սար ելնենք մեր գեներ զբահով,
Երգալ միշտ լեցուն փուշ և տատակով,
Աղբեր Սերոր ջան, քո ճանապարհով:



ԴԵՐՈՅԵԱՆԻ ՅԻՉԱՏԱԿԻՆ:

Դերոյեան Տիգրան, Մքօ և Արշակ:
Դաշկուրու բաշա եզան նհատակ,
Քաջ երիզատարդ Վասրիւրականի,
Դերոյեան Տիգրան, անունն է ցանկալի:

Նա իւր խմբի մէջ հրեշտակի նման,
Էն օր սև օրն էր քաջ Դերոյեանի,
Համեզի զօրքին շքչապատեցին,
Երեք հայ գինուոր սալով բերեցին:

Բոյոր հայերուս սրտերն այրեցին,
Չար կուտակալի փափաղ լցուցին,
Քաջ երիզատարդներ կուլան կ'ողբան,
Եւ միշտ կ'կանչեն Դերոյեան Տիգրան:

Էնա մատնիչներ,
Մէջկուրու բաշա,
Գիտի որք լինեն,
Նման վասակաց:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՅ

Ես գնումեմ հետու երկիր,
Իմ սիրելի թանգապին,
Բաժանվում եմ ես քեզանից,
Դուցէ կրկին չը դառնամ:

Գանչում է բակի միջին,
Ոստոքներս սոսկալի,
Յանկանում եմ քեզի տալու,
Սիրոյ համբոյրս վերջին:

Վերկաց սիրուն քո ձեւքովա,
Մէջքիս կապէ ս ուր նիզակ,
Գատերազմի փող հնչեցին,
Գիտի մտնեմ գեների տակ:

Մնաս բարով իմ սիրելի,
Իմ թանգագին բարեկամ,
Միշտ աղաչէ Աստուածանից,
Որ կենդանի հետ դառնամ:

Հայրենիքի սիրոյ համար,
Աշուղ երգիչ եմ դառել,
Գերեզմանս մէկ քարի տակ,
Գուք պիտ ծածկէք սև հողով:



Ե Ր Գ Ա Ջ Գ Ի:

Ախ Վասպուրական տխուր Հայաստան,
Անթիւ հերոսներ քեզ մէջ ժողովեցան,
Ահեղ կրուլի մէջ այսքան դիմացան,
Ի սէր ազգութեան նահատակուեցան:

Ո՛հ բաւէ հայեր միշտ սյուպէս գերի,
Թողնել Հայրենիք դիմել օտարի,
Օտար սիրումէ մեզ իբրև գերի,
Մեր հացն ու ջուրը դարձել է լեղի:

Ո՛հ բաւէ հայեր մեր անմիութիւն,
Պատիւ չը բերեց մեր հայ ազգութեան,
Պետքէ մենք գտնենք միութեան դարման,
Որով ազատենք մեր մայր Հայաստան:

Պետքէ միանայ ամբողջ Հայաստան,
Թող տեսնէ Եւրոպան ու Ամերիկան,
Պետքէ մենք լուծենք վրէժ Հայկական,
Քանի այսպէս տխուր է Հայաստան:

Վան սիրուն քաղաք իւր գաւառներով,
Լցուեցաւ դիակ հարիւր հազարով,
Ներկուեցան զաշտեր հայոց արիւնով,
Չայն տուեց ամբողջ երկինքը աստղերով:

Տեսէք թուրք ազգին ինչ անամօթէ,
Քաշեց մեզ վերայ սուր ու թնդանոթ,
Բայց երբ շողշողաց հայկական սրբեր,
Խաւարով պատեց թշնամեաց սրտեր:



Ս Ե Ր Ե Մ Ջ Ե Ա Ն Ի Յ Ի Չ Ա Տ Ա Կ Ի Ն:

Վերքերով լի ջան Ֆիդայեմ
Թափառական տուն չումեմ,
Եարիս փոխարէն գէնքս եմ գրկել
Մի տեղ հանգիստ քուն չունեմ:

Սրբինոտ երկիր սուղ ու շրվան
Ինձ դուրս կանչեց փաղ կեանքից,
Տանջուած Հայրենիքի սէրը
Չը փախեցուց փտանդից:

Ես խաչուեցայ ջան Փիղայի
Սկսբունքով սուրբ մնայ,
Թող իմ արեան կաթիլներով
Հայ գինուորն էլ գորանայ:

Մակեդոնեայ իմ եղբայրս
Իմ խաչովս պսակուեց,
Նղբայրական սիրուն գինքով,
Կազան սուլթանը խորտակուեց:

Ահա հանգիստ հող կ'մտնեմ
Յոյսս դուք էք ընկերներ,
Չարունակներ մեր սուրբ գործը
Կաշնակցութեան վէճ քաջեր:

Կախազանից երբ որ քամին
Ինձ տարուբերեց ճօճալին,
Յիշէք Պետրոս Սերիմճեանին
Թուրքից վրէժ գուալին:



ԵՐԿ ԱՂՈՏ ԹԱԹՈՒԼԻ:

Երկու քիօշքից հրաման, տվեց զահիճ սուլթանը,
Մնար բարեառ ազնիւ ընկերներ, մտտէ կեանքիս վախճանը:

Կարմրնագոյն պատանքս, բանտի պատէն մեխելեն,
Կիւտապաշտպան անգուլթ ֆարմանը, գլխիս վերայ կախելեն:

Թող չ'թաղէ ինձ թուրքն, թողնէ հողի երեսին,
Թող կատարէ անգուտ ֆարմանը, գազանական հանգէսին:

Ես պաշտել եմ գազափար, ուխտելեմ զհնուել ազգիս,
Կախազանս անգուլթ սարսափով, չեմ փոփոխել սուրբ հողիս:

Բայց դուք ազնիւ ընկերներ, ձեր սրտի մէջ գերեզման,
Թող Թաթուլին հանգերձներով, մահս յիշէք մշտական:

Արե լուսին կարոտով, երկար տարու տանջանքով,
Էրուամ վառուամ իմ կեանքին, վերջ գրեց իմ թշնամին:



ԵՐԿ ՖԻԿԱՅՈՒ:

Մենք անկեղծ գինուոր ենք առանցի վիճակ,
Ուխտել ենք ծառակ երկար ժամանակ,
Պարսկաստանի խորքից եկել խիստ նամակ,
Կուսմենք բարով, կուշանանք տարով,
Արին, սուր, հուր պատերազմի զաշտ կապտան մեզի:

Կուշմանը մեզ տուա «Ջան Փիղայ» անուն,
Այց անուան համաձայն տեսա գորութիւն,
Մենք չենք ուզեր ազատ կամայ բնութիւն,
Ուխտել ենք կուտել, այդ սիրով մեռնել,
Համոզուամ այդ միջոց կայ հայոց վախճան:

Ստամբոլը պիտի լինի արեան ծով,
Ամեն կողմից կռիւ կսկսի շուտով,
Կոտորենք Բաշկալայ, անցնենք հեշտ կերպով,
Աջից Վարդանը, ձախից Իշխանը,
Գրախնք Ազրակ, տարածենք սարսափ:

Բանակայի գրաւում, նոյն պատերազմին,
Աւելի մեծ սարսափ տիրեց սուլթանին,
Քաջ Ջէյթունը յաղթեց վատ չար դադանին,
Կեցցէ Ջէյթուն, խրոխտ Սասուն կուսակցութիւն
Անխտիր օրեր, պարծանք հայերին:



ՔԱՋ ԱՆԳՐԱՆԻԿԻՆ:

Դարձեալ փայլեց Սասնոյ զլխին,
Ազատութեան Գրօշակ,
Կէցցէ հայրենիք գոչելով,
Բարձրացրին ազադակ:

Թնդաց որոտաց ձայներից:
Ողջ աշխարհը Հայկական:
Խումբ—խումբ կարգած հայ գաւակներ,
Հասնում էին օգնութեան:

Գուրգէն Վահան Հրպը (դժոխք),
Քաջ Անդրանիկը զեկավար,
Տարրիկի լեռներում,
Չրջում էին անգաղար:

Սարսափեցան քիւրդ ցեղերը,
Մինչ պալատը սուլթանին,
Հրամայեց շուտ կործանել,
Գիրքերը հայդուկներին:

Ահա անգութ քիւրդը և տաճիկ,
Սարսափելի տեսարան,
Ժառանակէ վրեժ լուծել,
Գոչեց ձայնը Հայկական:

Կրակ տեղած հայ քաջերի,
Բնակավայր գիրքերից,
Գայլայլուեցան քիւրդ խուժաներ,
Ահուլի գնդակներից:



ԳԱՋՆՍԱԿՅԱՍՆԵՐԻ ՄԱՐԶԸ:

Հայ երիտասարդներ շուտ շտապեցէք,
Բուպլէն շատ թանկ է առաջ քայլեցէք,
Օտարք հայերին կտտեն վախկոտեն,
Քաջութեան Գրօշակը պարզեցէք:

Միթէ մենք Վարդանի ց'ղից չենք,
Մէկս հագարի գեմը կը կուռնք,
Մի ժամանակ մենք շղթայուած էինք,
Հիմայ ազատենք և ունինք շատ գէնք:

Օգնութեան հասանք աչ խան ու Մուրազ,
ձիշտ հայու գավակ ծնունդն անարատ,
Մօկացի Գրիգորն և երկու Արշակ,
Գնդակ թափումն կարկուտից արագ,

Քաջ Թումանեանցը, որսորդ Վերդը,
Կազմ ու պատրաստերն իրանց խումբը,
Գաշնակցութեան Գրոշակի ահից,
Սարսափահար փախչում է վատ թուրքը:



ՈՐՍՈՐԳ ԽՄԲԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ:

Ղարսից դուրս եկան թաղբուր ժողուեցան,
Նոյն գիւղի մէջը քաջերը կարգով շարուեցան,
Գիշերուայ ժամի, (?) գանդերը գողանջեցան,
Քաջերը սուրը Հաղորդութիւն ստացան,
Քաջ Թումանեանը խնդրուեց խողերին,
Չը լսեցին հերոսին քաջերին գահեցին:

Քաջերը կանգնեցին սուրը սեղանի առաջ,
Երդուեցին միտտին սուրը Գրոշակ բռնած,
Քաջ խմբապէտ Թումանեանը ստաջն էր կանգնած,
Չայն տուեց եղբայրը գնանք, դէպ առաջ—առաջ:
Քաջ Թումանեանը և այլքն:

Չտապով գիշերը գիւղից դուրս եկան,
Արշալոյսը բացուեց Բիւրիկ աղբիւրը հասան,

Անախտան թշնամիները շուտով տեսան,
Երկու գագան իրար օգնութեան հասան,
Քաջ Թումանեանը և այլքն:

Ղալայ բողաղից անշուշտ նկատեցին,
Գազանները քաջերին շրջապատեցին,
Օգնող չեղաւ անօգնական մնացին,
Յոյսները կտրեցին այնպէս գոհուցան,
Քաջ Թումանեանը և այլքն:

Քաջ Որսորդ Վերդն չ'կտրեց յոյսը,
Սուրը Գրոշ պարզեց տամնապէտ Պետրոսը,
Գնդակով թաղումին թշնամեաց յոյսը,
Անվէհեր կռում էր Քեօսայ հերոսը,
Քաջ Թումանեանը և այլքն:

Ծերունի քահանան բռնել էր խաչը,
Թումանեանից խնդրեց այսպէս Գուրգեն քաջը,
Կրակ բանանք գէպի խողերի շարքը,
Չի կարելի ստաց խորամիտ քաջը,
Քաջ Թումանեանը և այլքն,

Թումանեանցը մտածում էր մեր վիճակ,
Ասաց միք բանայ խողերին վրան գնտակ,
Սոսկալի կլինի Կովկասի վիճակ,
Թող մեր եղբայրները բնենն մեր վիճակ,
Քաջ Թումանեանը և այլքն:

Թումանեանցը ստաց մենք լինենք նահատակ,
Կովկասը թող լինի ազատ համարձակ,
Ինանք մինչևի հաւիղեան յիշատակ,

Մի՞թէ չ'կամի հայր, որ լա մեր սանջանք,
Քաջ Թումանեանցը և այլն,

Ելիք վրեժ գոչինք անվախ եզրայրներ,
Այն լեռը զսճուեցան առիւծի կորիւններ,
Նոցա աղերսանքից լեռը ոգրում էր,
Ամօթէ հայեր թէ մեռանաք այն գիակներ:
Քաջ Թումանեանցը և այլն:

Ի՛է հայեր վերցնենք սուր և հրացան,
Ուռն գոռանք թշնամուց բարձր ձայն,
Թշնամին թող գողայ երբ լսէ ուռան,
Քիւրդեր ջարդելով մանենք Հայաստան:
Քաջ Թումանեանցը և այլն:



ԽԱՆԻ ԵՒ ՄՈՒՐԱԿԻ
(գիւլի սուլթան, եղանակով):

Հասակս քսան տարեկան,
Հրացան տուիք բարեկամ,
Մենք չենք ուզում ստրկութիւն,
Մեզ խրախուսող մայրեր կան,
Ավանդ, ավանդ, ավանդ:

Ինչու ենք կեցեր խաղաղ,
Խուճերը ուինք պարսկաստան,

Զուտով կանցնենք տաճկաստան,
Ունիս բազում հերոսներ,
Կուգան քեզ Մայր-Հայաստան:

Հրացանը ուսիս կախեմ,
Ես իմ կեանքս պիտ թանկ ծախեմ,
Կեցցէն կարիչ հայ հերոսներ,
Թշնամու գէժ միշտ անվախեն,
Ավանդ և այլն:

Սուլթան, գլխիտ դու միշտ վայ բէր,
Քանի որ կան Խան, Մուրադներ,
Կեցցեն նրանց թիկնապահներ,
Մեր Հայրենիքը չէ անտէր,
Ավանդ և այլն:

Միջատ երգովք վրազէ,
Որտեղ ճշմարիտ հոն վազզէ,
Թէկուզ հանին քեզ կախազան,
Ուղղութիւնը դու միշտ պարզէ,
Ավանդ և այլն:



ՏՈՒՐԱՆԻ ԵՐԳԸ:

Ուրեմն մտաք բարով ազնիւ ընկերներ,
Մեռնեմ ձեր հոգուն երջանիկ քաջեր,
Քո հոգին մատաղ Տալոսիկ ազատ,
Կեցցեա դու հաւէտ Անդրանիկ քո վարդ:


Քաջի համբոյրով տուով հրածէշտ,
 Անվէհեր ճուրբախ ընկեր հարազատ,
 Բոպէ անցաւ սրացաւ ուժգին,
 Վէհ Դաշնակցութեան սուրբ անուն արժան:

Երգինքը պատելէր գունդ-գունդ սև ամբեր,
 Արեղակ չկար մութ սև խավարէր,
 Դժուար էր գատուել քաջ ընկերներէց,
 Հայ ազգի սիրամ ու պաշտամ տեղից:

Հեռուից տեսնող, էլ ու աշիրաթ,
 Երնէկ կուտային քեաֆուր ճուրբախին,
 Ահու սարսափով լցուած թուրք միլլաթ,
 Կապուտ աչքերից արին կ'ցայտէր:

Նժոյգ ձի նստած անակի գեմքով,
 Երկինք ձայն տուեց վէհ քաջի արարք,
 Խնուսայ փաշէն լցուած էր դողով,
 Թռչում էր ցոլակ ցայտում էր կրակ:

Անհամբեր սրտով դաշնակի ճուղեր,
 Կտրիչ ճուրբախի գալուն կ'սպասեն,
 Փարք ու պարձանք էր մեկ այսպէս քաջեր,
 Ուրախ լուր բերաւ ազատ Սասունէն:




ՔՈՅՐ ՆՒ ԵՂԲԱՅՐ:

Վեր կաց եղբայր քեզ մատաղ ազնիվ քոյրդ,
 Պատրաստել ես հրացանըդ և սուրդ,
 Ըարժէ թշնամուն ձեռքիդ բռնամ սուրդ,
 Խմէ արին, ինչպէս խմում ես ջուրդ,
 Վի վախենար քեզ մատաղ ազնիվ քոյրդ:

Ձինուիր եղբայր զնայ պատերազմի դաշտ,
 Աշխատէ որ լինես եղբայրցդ հէտ հաշտ,
 Եյն ժամանակ դուն կը գործես մենձ հրաշք,
 Խմէ արին և այլըն:

Սիրէ ընկերիդ ինչպէս սիրում ես քեզ,
 Եյն ժամանակ կասեմ դու իմ եղբայրս ես,
 Վրէժինդրութիւնը միշտ միտքդ բերես,
 Խմէ արին և այլըն:

Գնայ եղբայր ելիր Սասուն այնտեղ կաց,
 Չար սուլթանի սրտի վերայ վերք բաց,
 Լսէ միջազու խնդիրը ինչպէս քաջ,
 Խմէ արին և այլըն:



Ե Ր Գ (Կարնեցի Գարեգինի):

Հայաստանի փառք ու պարձանք Գարեգինը Կարնեցի,
 Թրկունքը լայն թևերը հասա ինքը կորին առիւծի:

Հայաստանի վերքին հմուտ վերայբուժէր խելացի,
Եղբայր լացէք ու ողբացէք այն քաջ հերոսի անձի:

Խմբով ելան Ղալա բուղազ թշնամու դեմ կռուեցին,
Մի քաջ հերոս վիրաւորվաւ Գարեգինին հանձնեցին:

Նա ուզում էր վիրաւորին հեռացնել արեան դաշտից,
Չորս կողմիցն հարցակուեցին և քաջինը պաշարեցին:

Անիրաւ վատ թշնամի դու քաջ ֆիզայուն լաւ ճանաչէ,
Ուրիշից օղնութիւն փնտառում Եւրոպայից ամաչէ:

Որքան կուգես մեզ հէտ կուռէ ամբողջ այդ գորքերովը,
Վստահ եղիր որ քեզ հաղթող պիտի լինի Գաշնակը:

Նա ուխտել էր պէտքէ գոհէր իբր կեանքը Գրոշակին,
Եւ ճշտապէս նա նուիրեց իր կեանքը թանկագին:

Կուրծքին չորս գնդակ բտացաւ վէրք ունեցաւ ահագին:
Կրկին հրացաննէր պարպում այն քաջ հերոս Գարեգին:

Միջազինեմ պէտքէ յիշեմ ձեզ նման միշտ քաջերին,
Որ թափեցիք ձեր արիւնը Հայաստանի հողերին:

Ամբողջ հայիւթիւնը կանգնած ձեր վրեժը ուզելու,
Քնէք Հայաստանի քաջեր հանդիսս ձեր սկիորներուն:



Ս Ա Ս Ո Ւ Ն Յ Ք:

Հայաստանի քաջ անդրանիկ զաւակներ,
Ողջ հայերուն փառք ու պարծանք Սասունցիք,
Ձեր ոտքերուն մատաղ սուրբ նահատակներ,
Մեզ յոյս ու սպասէն մեզ կեանք Սասունցիք:

Գէմ քայլէք թշնամուն անուխ քաջարար,
Չորս ամիս շաբուն սկ կռուելով երգար,
Չոհեցիք ձեր կեանքը հայութեան համար,
Տուիր հայրենիքին փրկանք Սասունցիք:

Ամնն մէկս մէկ մէկ խուժեցի Հովնան,
Աւիւծի կորիւններ հայրենեաց պաշտպան,
Կամ կը մեռնէնք կամ կը մեռցնէնք նրան,
Ով որ ձեզ տայ վիրաւորանք Սասունցիք:

Բնութեան զուակներ ահարկու ոյժեր,
Մհերայ թոռներն էք անարատ անմեղ,
Ձեր թափած արիւնը անցներ բանի տեղ,
Չլինիր անօգուտ զուր ջանք Սասունցիք:

Քաջ Վարդանը նահատակեալ բանակով,
Ձեզի դիմաւորումէ երգնից պսակով:
Լուսաւորիչը սուրբ Ղևոնդով—Մհակով,
Ձեզ տալիս է մէժ գովասանք Սասունցիք:



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Մ Ա Ր Ձ:

Մեր կայքերը խորհուրդները Հայրենիքի սէրն է,
Մեր կայքերը մեր կեանքերը մեր ազգի նուերն է,
Ժառանգը պապի և նորա կալուածների սէրն է,
Այսքան տարիներ միշտ նեղութիւն տանողը մենք ենք,
Էլ չենք զիմանար թշնամու դէմ կողմողը մենք ենք:

Մեր նախնիքը անկախ հողի մէջ կապրէին ազատ,
Ով որ լսում է Հայ անունը գոցում էր հաստատ,
Մարդիքը նրանք չեն, արիւնքը նոյնն է հարահատ,
Այսքան տարիներ և այլն:

Արիւն ու սուր է և կրակ է մեր Դրօշակ,
Մեռնելու համար վախ չունի մեր քաջ նահատակ,
Առիւծ կ'լինի խեղճ հայը երբ ասնէ նիզակ,
Այսքան տարիներ և այլն:

Մենք չենք վախենայ թնդանօթից եթէ ունինք ջանք,
Մեռնենք կ'զնանք արքաութիւն այնտեղ է լավ կեանք,
Ինչքան վախեցանք մեռնելուց, կենդանի մեռանք,
Այսքան տարիներ և այլն:



ԱՆԳՐԱՆԻԿԻ ԳԱՍՏԱՆԸ:

Հագար ինք հարիւր չորս թուականին,
Կարգացի Սառունի նամակը համառոտ,

Սուլթանը հրամայեց իւր թիկնապաշին,
Հայոց պատրիարքը բէրէ ինձի մտ:

Պատրիարք տեսնում ես հայերիտ բանը,
Ազատամբուով էլի Սառուն Մուշ, Վանք,
Կը կոտորեմ քու ամբողջ Հայաստանը,
Դրէ զինաթափ լինին չը զրգեմ թնդանօթ:

Ինձ չեն լսում ես ինչպէս գրեմ նամակ,
Զինաթափ չեն լինի ոչ մի ժամանակ,
Թէկուզ նազարներով դու զրկես բանակ,
Կուվումեն քաջի պէս չեն լինի վախկոտ:

Սուլթանը հրամայեց Մշոյ վալլին,
Գնայ Սառուն ջարդէ ամբողջ հայերուն,
Տիրապէտէ նոցա անտեղ հողերուն,
Թող մայրեր սրբոց մնան միշտ կարոտ:

Վալին ասեց անձնատուր եղիր Անդրանիկ,
Կեանքդ կ'նուիրեմ քեզ թանգազին,
Տեսնում ես գորքեր կանգնած ահապին,
Ուր պիտի վախչես ձեռքես քեզի կ'հանեմ օդ:

Անդրանիկն ասաց սպասէ դու մի քիչ,
Զորքերիդ կ'դարձնեմ շուտով բնաջինջ,
Անպէն մարդոց դուք կ'զառնաք միշտ կտրիչ,
Այդպէս կեխոտոտ ազգ էք ձեզ չ'կայ ամօթ:

Վալին ասա քեզ չ'կայ մէկ օգնող,
Ունեմ ահազին գորք կ'զառնամ յադտող,

Արի ինձի լսէ այդ գենքերդ թող,
ես սիրումեմ քեզ դու ինձի շես ծանօթ:

Անդրանիկըն ասաւ շես կարող խափել մեզ,
Քեզ պէս յիմար թուրքեր շատ եմ տեսել ես,
Յիմայ գենքերով պիտի պատասխանեմ քեզ,
Գլխիտ պետքէ թափեմ գնդակ ու վառօտ:

Վալին ասաւ շղթայեցինք սահմանը,
Ռուսաստանի հետը գրեցինք պայմանը,
Սուլթան համեզ ընձի տակց ֆարմանը,
էլ չի կարող անցնել էտեղից մի ճամբորտ:

Անդրանիկն ասաց քո գորքերդ փառավոր,
Գլխին կրակ թափեց Կայծակ ձիավոր,
Ջորքերուդ գիակներով լցուով սար ու ձոր,
Սարսափեցաւ քո սուլթանը անամօթ:

Վալին ասաւ նրանք ձգին գինամէտ,
Սարսափեցաւ գորքս փախաւ դէպի հէտ,
Մեզի պաշտպանուելու չ'կար ոչ մի կէտ,
Նրանց գիրքը լաւ էր քրշոտ ու քարոտ:

Անդրանիկն ասաւ դու գրկեցիր գորքեր ու քիւրդեր,
Յիրուցան արին իմ քաջ սուխճներ,
Ջորքերուդ գիակներով լցուաւ խոր փոսեր,
Մշու գաշտից ինչու փախար անամօթ:

Վալին ասաւ պէտքէ անեմ քանի որ կամ,
Ջարդեմ կին մանուկ շտէսնէս անքամ,
Քաջութիւնս լսէ ամբողջ Եւրոպան,
Փայլուն սուրս պէտքէ մնայ արիւնոտ,

Անդրանիկը ասաւ ես ինչ խոսեմ քեզի հէտ,
Գեմտ ես եմ կանգնէ կառէ ինձի հէտ,
Տալորիկի կռուից ինչու փախար դէպի յէտ,
Կինարմատի յազտոյ անիրաւ կեղտոտ:

Վալին ասաւ շեմ վախենար քու գէնքէն,
Հեծեալ գորք կուգայ Կարին քաղաքէն,
Քարուքանդ պիտի անեմ Սասունը հիմքէն,
Աւերակ կը տեսնես գիւղերը առաւոտ:

Անդրանիկն ասաւ շուրք շունիս քաջութեան,
Աղթամարի կռուից փախար դէպի վան,
Հայի քաջութիւնը դու տեսար անբան,
Ամեն տեղ դարչուցինք քեզի խոշնատ:

Վալին ասաւ ես որ տեսայ այն օրը,
Մեզ խարեցիր տաշար լցիր այն ձօրը,
Երկնքից թափեցաւ գորքիս կտօրը,
Կը հեռանամ էտից էլ շեմ գար քեզի մոտ:

Անդրանիկը սուր չէր գնէր պատեանը,
Կտտրեց թշնամու կապած պինդ շխտան,
Լսելով սարսափաւ սուլթան համիդ խան,
Միջազ հիշէ Անդրանիկին անդադար:



Գ Է Պ Ի Հ Ս Յ Ր Ե Ն Ի Ք:

Մեզ պէտք է երգել
Ոչ սիրոյ երգեր
Մեզ պէտք է երգել
Ապատման երգեր:

Գեպի Հայրենիք—աշխարհ Հայաստան
Ողևորելու երգեր Հայութեան
Իոքայ պիտ գրգռեն մեր անեղ հային
Գէպի թշնամու բանակ անաղին:

Գէ՛հ հայեր յառաջ
Գիմենք մենք անվախ
Յաղթենք թշնամուն
Փշրենք աջ ու ձախ:

Հայեր մենք պէտքէ փրկենք Հայաստան
Մեզի օտարը չի լինի պաշտպան
Հայեր, գէ՛հ, յառաջ գիմենք Հայաստան
Փրկենք Հա՛ւերին, կորչի տաճկաստան:



Գիշեր ցերեղ աշխատում ես անդադար,
Քո խեղճ ազգիդ քաջ պահապան Անդրանիկ,
Կեանքդ ընծայելու ազգիդ համար,
Չեն մոռանայ քեզ յաւիղեան Անդրանիկ:

Քո անունդ օրս օրէ բարձրացաւ,
Լսեց ձայնդ շար սուլթանը սարսեցաւ,
Ձենքիդ շուռաշինը եւրօպան իմացաւ,
Քեզի գոչեց քաջն Վարդան Անդրանիկ:

Քաջեր անէք դուք ձեր մտքը քաջ հսկայ,
Առիւծի պէս միշտ կուտմ ես անխնայ,
Քո սրտի մէջ ա՛ն ու երկիրդ հեշ չկայ
Յոյց կուտար գործ դուք քաջութեան Անդրանիկ:

Երկու հազար ոսկով մարդիք ճարեցին,
Քո գէ՛մ հազար մի կերպ թակարդ լարեցին,
Իննը հազար քիւրդեր քեզ պաշարեցին,
Որ համեն ձեզ կախապան Անդրանիկ:

Քիւրդստան—Տաճկաստան էլ էր որտարւմ,
Բարձրացուցիր Իրօշակ Սասնայ լեռներում:
Միրաթս խնդրում է ունենաս բազում,
Ազնիւ քաջեր դու ինքնամշան Անդրանիկ:



ԹՈՂ ԵՐԳԷ ԲԼՔՈՒՄ,

Թող երգէ բլբուլ Մշու պաշտերում,
Թող վարդեր բացուին Սասնայ լեռներում,
Թող մեր թշնամին սարսեն սարսուփեն,
Իագան քիւրդերն ճաքին տրաքեն:

Մշու պաշտերը ծաղրունքով բացուած,
Հայու սերունդը կ'պահէ Աստուած,
Ինչքան որ կուզեն թշնամիք թող գան,
Սասնայ լեռներէն ինչ պիտի ստանան:

Ինչու չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամուցը ով կ'վախենայ,
Թող հայ ազգիկը երգէ վառուտն,
Սուր գէնքը ձեռքին ջարդէ քիւրդերուն:



Արևն ընկաւ Լօռուայ սարին,
Բարև տարէք դուք իմ նանին,
Ասէք գնումեմ թափէլ արիւն,
Օգնելու թշու. հայերուն:

Ահա և բացում է դարուն,
Ուժքս գրած եմ զհնքերուն,
Կամեմ ծծել թշնամու արիւն,
Եւ իս ուր ես իմ աղատութիւն:

Վերջապէս ճանապար ընկայ,
Հոգի ունեմ ինչպէս Հայկայ,
Ես իմ հոգս շես մուանայ,
Թէգուց արիւնիցս կաթիլ մնայ:

Մէլիք (Վ...թ-բ—ցի)




Ես սիրումեմ պապիս հոգը
Ես եմ «Արեան Չայնի» շարողը,
Չարումեմ ծածուկ ամեն սողը,
Որ լոյս տեսնի «Արեան Չայնը»:

Լօռեցի Սի—ն (կեզժ Կ Ռ Օ):



Վ Ե Ր Տ:





ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0389509

72 780